**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**«ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ**

N **ՀԿ-ԳՀԾՁԲ**-26/03

ք. Երևան «16» 03 2026թ.

**«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ն**, ի դեմս գլխավոր տնօրեն **Ն.Հարությունյանի**, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, **և «ՍԵՐՎԻՍ ՍՏԵՅՇՆ» ՍՊԸ-ն**, ի դեմս տնօրեն **Է.Մկրտչյանի**, որը գործում է Ընկերությոն կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ծառայողական ավտոմեքենաների վերանորոգման** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps

համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 1 **500 000** (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների համար, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը

հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների

հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից բանկին վճարման հանձնարարական տալու օրվան նախորդող օրը:

7.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.14 Սույն պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ | Կ Ա Տ Ա Ր Ո Ղ |
|---|---|
| «Հաշվարկային Կենտրոն» ՓԲԸ | «ՍԵՐՎԻՍ ՍՏԵՅՇՆ» ՍՊԸ |
| ք. Երևան, Աբովյան փող. շ. 27 | ք.Երևան, Դավթաշեն 1 թղմ. շենք 3, բն. 9 |
| ՀՎՀՀ 01544167 | ՀՎՀՀ 00241595 |
| «Կոնվերս բանկ» ՓԲԸ | Էվոկաբանկ ԲԲԸ |
| Հ/Հ 1930000600150100 | Հ/Հ 1660019711410100 |
| Ն. Հարությունյան________ | Է.Մկրտչյան ________ |
| Կ.Տ | Կ.Տ |

*Յավելված N 1*

16.03. 2026 թ. կնքված

**ՅԿ-ԳՅԾՁԲ**-26/03 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՅՅ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՅՅ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը** |
| 1 | 50111130 | Ներկայացված է Յավելված N 1.1–ով, կցված է | հատ | 1 500 000 | 1 | ք. Երևան Դավթաշեն 1 թղմ. | Պայմանագրի ուժի մեջ մտնելուց 20 օրվա ընթացքում |

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

«Յաշվարկային Կենտրոն» ՓԲԸ
ք. Երևան, Աբովյան փող. շ. 27
ՀՎՀՀ 01544167
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930000600150100

Ն. Յարությունյան_______________

Կ.Տ

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«ՍԵՐՎԻՍ ՍՏԵՅՇՆ» ՍՊԸ
ք.Երևան, Դավթաշեն 1 թղմ. շենք 3, բն. 9
ՀՎՀՀ 00241595
Էվոկաբանկ ԲԲԸ
Հ/Հ 1660019711410100

Է. Մկրտչյան _______________

Կ.Տ

Հավելված 1.1

«ՀԿ-ԳՀԾՁԲ-26/03» ծածկագրով
գնանշման հարցման մրցույթի հրավերի

## Տեխնիկական բնութագիր

## Ձեռքբերվող Ծառայության նկարագիր

| h/h | SU-1, SU-2 Ծառայությունների և SU-2-ի ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները // Наименования Вспомогательных материалов, масел и запчастей | Տրանսպորտային միջոցների մակնիշները (տեսակները) // Марки транспортных средств | | |
|---|---|---|---|---|
| | | HYUNDAI ELANTRA 1.6 թեթև մարդատար սեդան (3 հատ) 2014թ. | NISSAN X-TERRA 4.0 թեթև մարդատար ունիվերսալ 2005թ. | CHEVROLET CAPTIVA 2.4 թեթև մարդատար ունիվերսալ 2014թ. |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| | *SU-1 ներառվող ծառայությունների անվանում* | | | |
| | **1. Ղեկավարման, սնման , յուղման, հովացման և արտածման համակարգ // Система управления, питания, смазки, охлаждение и выхлоп** | | | |
| 1 | Յուղի և յուղի զտիչի փոխարինում // Замена масла и фильтра масла | 1,299 | 1,299 | 1,299 |
| 2 | Բռնկման կարգավորում // Регулировка зажигания | 1,299 | 1,299 | 1,299 |
| 3 | Վառելիքի բաքի հանում տեղադրում // Демонтаж/монтаж топливного бака | 12,988 | 16,235 | 16,235 |
| 4 | Բաքի բենզոմղիչի ցանցի մաքրում // Очистка фильтра топливного бака | 3,896 | 3,896 | 3,896 |
| 5 | Վառոցքի կոճի փոխարինում // Замена катушки зажигания | 2,598 | 2,598 | 2,598 |
| 6 | Բենզոմղիչի փոխարինում // Замена топливного насоса | 3,240 | 3,240 | 3,240 |
| 7 | Բաքի բենզոմղիչի ցանցի փոխարինում // Замена фильтра топливного бака | 5,195 | 5,195 | 5,195 |
| 8 | Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում // Монтаж и демонтаж или замена радиатора | 12,339 | 20,131 | 20,131 |
| 9 | Ռադիատորի նորոգում // Ремонт радиатора | 29,223 | 35,717 | 29,223 |
| 10 | Փոխանցման տուփի յուղի փոխարինում // Замена трансмиссионного масла | 9,741 | 16,235 | 12,988 |
| 11 | Օդածախսի տվիչի հանում տեղադրում // Демонтаж/монтаж датчика расхода воздуха | 6,494 | 7,793 | 8,442 |
| 12 | Խլացուցիչի հանում և տեղադրում կամ փոխարինում // Монтаж и демонтаж или замена глушителя | 9,741 | 12,988 | 12,988 |
| 13 | Խլացուցիչի խողովակի փոխարինում // Замена выхлопной трубы | 6,494 | 6,494 | 6,494 |
| 14 | Օդի փականի լվացում // Промывка воздушного клапана | 9,741 | 12,988 | 12,988 |
| 15 | Փականի խցուկի փոխարինում // Замена сальников клапана | 32,470 | 51,952 | 38,964 |
| 16 | Օդի զտիչի փոխարինում // Замена фильтра воздуха | 1,948 | 1,948 | 1,948 |
| 17 | Ավտոմատ տուփի յուղի զտիչի փոխարինում // Замена масляного фильтра автоматической коробки передач | 3,247 | 6,494 | 9,741 |
| | **2.Վազքային // Ходовая часть** | - | - | - |
| 19 | Փոխանցման տուփի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները // Капитальный ремонт коробки передач, включая все работы | 64,940 | 77,928 | 77,928 |
| 20 | Ավտոմատ փոխանցման տուփի հանում, տեղադրում կամ փոխարինում // Демонтаж, монтаж или замена автоматической коробки передач | 38,964 | 51,952 | 51,952 |
| 21 | Բաշխիչ տուփի հիմնական նորոգում // Капитальный ремонт распределительной коробки | | 77,928 | 77,928 |
| 22 | Բաշխիչ տուփի քանդում և արատավորում, հավաքում // Разборка, проверка состояния распределительной коробки | | 58,446 | 58,446 |
| 23 | Հետևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխարինում // Демонтаж и монтаж или замена заднего моста | | 97,410 | 97,410 |
| 24 | Հետևի կամրջակի քանդում, արատավորում և հավաքում // Разборка, проверка состояния и сборка заднего моста | | 64,940 | 64,940 |
| 25 | Հետևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում // Замена дифференциала заднего моста | | 51,952 | 51,952 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 26 | Կամրջակի տվիչի փոխարինում // Замена датчика моста | | 6,494 | 6,494 |
| 27 | Դիմացի հարվածամեղմիչի փոխարինում // Замена переднего амортизатора | 6,494 | 9,741 | 9,741 |
| 28 | Ետևի հարվածամեղմիչի փոխարինում // Замена заднего амортизатора | 5,195 | 6,494 | 7,793 |
| 29 | Անավակունդի փոխարինում // Замена шарового | 6,494 | 9,741 | 9,741 |
| 30 | Խաչուկի փոխարինում // Замена крестовины | - | 7,793 | 7,793 |
| 31 | Ներքևի լծակի վռանների փոխարինում // Замена нижних рычагов подвески | 3,896 | 5,195 | 6,494 |
| 32 | Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում // Демонтаж передней правой или левой тяги и установка | 3,896 | 7,793 | 7,793 |
| 33 | Գնդե հոդակապերի փոխարինում // Замена тяги | 2,598 | 5,195 | 5,195 |
| 34 | Ծայրակալնների հանում և տեղադրում // Демонтаж и установка наконечников | 3,896 | 6,494 | 6,494 |
| 35 | Առջևի կայունարարի վռանների փոխարինում // Замена втулок передних стабилизаторов | 3,247 | 7,793 | 7,793 |
| 36 | Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում // Демонтаж и установка стойка стабилизаторов | 5,195 | 9,741 | 9,741 |
| 37 | Անվավազքի կարգավորում // Балансировка колес | 6,494 | 9,741 | 9,741 |
| 38 | Առջևի կախոցի լիակատար քանդում և հավաքում // Полный демонтаж и сборка передней подвески | 29,223 | 48,705 | 48,705 |
| 39 | Տրավերսի հանում և տեղադրում // Разборка и установка траверса | 16,235 | 25,976 | 25,976 |
| 40 | Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում // Разборка и установка левой или правой тяги | 7,793 | 11,689 | 11,689 |
| 41 | Անվակունդի առանցքակալի փոխարինում // Замена подшипника шаравого | 7,793 | 11,689 | 11,689 |
| 42 | Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում // Замена заднего подшипника шарового | 7,793 | 11,689 | 11,689 |
| 43 | Ձախ կամ աջ հոդակապի խցուկների փոխարինում // Замена левых или правых сальников тяг | 9,741 | 16,235 | 16,235 |
| 44 | Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում // Разборка и установка переднего стабилизатора | 6,494 | 9,741 | 9,741 |
| 45 | Միջին ձգանի հանում և տեղադրում // Разборка и установка средней тяги | 4,871 | 8,118 | 8,118 |
| 46 | Վերևի լծակի հանում և տեղադրում // Разборка и установка // верхней тяги | 3,896 | 7,793 | 7,793 |
| 47 | Վերևի լծակի վռանների փոխարինում // Замена верхней втулки | 3,247 | 6,494 | 6,494 |
| 48 | Հետևի զսպանակի փոխարինում // // Замена задней пружины | 10,390 | 16,235 | 16,235 |
| 49 | Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում // Разборка и установка заднего стабилизатора | 6,494 | 9,741 | 9,741 |
| 50 | Հետևի ձգաձողի հանում և տեղադրում // Разборка и установка задней штанги | 5,195 | 11,689 | 11,689 |
| 51 | Հետևի երկայնաձողի հանում և տեղադրում // Разборка и установка заднего // | 5,195 | 11,689 | 11,689 |
| 52 | Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում // Разборка и установка задней угловой рогатки | 5,195 | 11,689 | 11,689 |
| 53 | Անկյունագծային լծակի վռանների փոխարինում // Замена угловой рогатки втулки | 5,195 | 11,689 | 11,689 |
| 54 | Վերևի և ներքևի լծակներ // Верхний и нижний рогатки | 6,494 | 12,988 | 12,988 |
| | **3. Ղեկային մեխանիզմ // Рулевой механизм** | | | |
| 55 | ՂԿ-ի առանցքակալի և /կամ վռանների փոխարինում/ // Замена подшипника рулевого колонки/или втулка/ | 7,793 | 12,988 | 12,988 |
| 56 | Ղեկային կալունի հանում և տեղադրում // Монтаж и демонтаж рулевой колонки | 16,235 | 22,729 | 22,729 |
| 57 | Ղեկասյունակի քանդում, արատավորում և հավաքում | 9,741 | 22,729 | 22,729 |
| 58 | Հիդրոուժեղարարի փոխարինում // Замена гидроусилителя руля | 6,494 | 6,494 | 6,494 |
| 59 | Ղեկասյունակի հանում, տեղադրում կամ փոխարինում | 6,494 | 9,741 | 12,988 |
| | **4. Արգելակային համարկարգ // Тормозная система** | - | - | - |
| 60 | Արգելակային համակարգի օդահանում // Вентиляция тормозной системы | 3,247 | 3,247 | 3,247 |
| 61 | Առջևի արգելակային կոճղակների փոխարինում // Замена передних тормозных колоток | 3,247 | 3,247 | 3,247 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 62 | Առջևի և ետևի սկավառակների փոխարինում // Замена передних и задних дисков | 5,195 | 5,195 | 5,195 |
| 63 | Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում // Замена задних дисковых колоток | 3,247 | 3,247 | 3,247 |
| 64 | Առջևի արգելակային սկավառակի փոխարինում // Замена переднего тормозного диска // | 5,195 | 5,195 | 5,195 |
| 65 | Հետևի արգելակային սկավառակների փոխարինում // Замена задних тормозных дисков | 5,195 | 5,195 | 5,195 |
| 66 | Ձեռքի արգելակի ճոպանի հանում տեղադրում // Снятие и установка троса ручного тормоза | 4,546 | 4,546 | 4,546 |
| 67 | ABC-ի նորոգում // Ремонт ABC | | | |
| 68 | ABC-ի հանում և տեղադրում կամ փոխարինում // Демонтаж и монтаж или замена ABC | 9,741 | 18,183 | 18,183 |
| 69 | Մեկնարկիչի հանում, տեղադրում կամ փոխարինում // Демонтаж, монтаж или замена стартера | 9,741 | 18,183 | 18,183 |
| | **5. Էլեկտրասարքավորում // Электроника** | - | - | - |
| 70 | Վառոցքի մոմերի փոխարինում // Замена свечей | 3,247 | 16,235 | 16,235 |
| 71 | Կոճի փոխարինում // Замена катушки | 3,247 | 16,235 | 16,235 |
| 72 | Գեներատորի հանում և տեղադրում // Демонтаж/монтаж генератора | 6,494 | 9,741 | 9,741 |
| 73 | Գեներատորի վերանորոգում // Ремонт генератора | 6,494 | 9,741 | 9,741 |
| 74 | Գեներատորի փոկի փոխարինում // Замена ремня генератора | 3,247 | 6,494 | 6,494 |
| 75 | Գեներատորի առջևի իրան // Передняя часть корпуса генератора | 6,494 | 9,741 | 9,741 |
| 76 | Գեներատորի խարիսխի հետևի պլաստմաս // Якорь генератора задний пластиковый | 5,195 | 11,689 | 11,689 |
| 77 | Մենարկիչի մագնիս // Магнит стартера | 16,235 | 16,235 | 16,235 |
| 78 | Էլեկտրոհամակարգի կարգավորում // Настройка электрической системы | 6,494 | 6,494 | 6,494 |
| 79 | Էլ.հաղորդալարերի մասնակի վերանորոգում // Частичный ремонт Эл.проводки | 9,741 | 9,741 | 9,741 |
| 80 | Կոնդիցիոների լիցքավորում // Заправка кондиционера | 16,235 | 16,235 | 16,235 |
| 81 | Գեներատոր // Генератор | 29,223 | 55,199 | 55,199 |
| 82 | Մենարկիչի առջևի իրան // Передняя часть корпуса пусковой установки | 9,741 | 9,741 | 9,741 |
| 83 | Առջևի լապտերների կարգավորում // Регулировка передних фар | 3,896 | 3,896 | 3,896 |
| 84 | Կոնդիցիոների վերանորոգում // Ремонт кондиционера | 32,470 | 32,470 | 32,470 |
| 85 | Առջևի լապտերների փոխարինում // Замена передних фар | 6,494 | 6,494 | 6,494 |
| 86 | Հետևի լապտերների փոխարինում // Замена задних фонарей | 6,494 | 6,494 | 6,494 |
| | **6. Այլ ծառայություններ // Другие услуги** | - | - | - |
| 87 | Դիագնոստիկա // Диагностика | 6,494 | 6,494 | 6,494 |
| 88 | Շարժիչի ատամնավոր փոկի փոխարինում // Замена зубчатого мотора | 22,729 | - | - |
| 89 | Անիվի հանում տեղադրում // Разборка и установка колеса | 974 | 974 | 974 |
| 90 | Անվադողի վերանորոգում // Ремонт шины | 974 | 974 | 974 |
| 91 | Անիվի բալանսավորում // Балансировка колеса | 974 | 974 | 974 |
| 92 | Ռադիատորի փոխարինում // Замена радиатора | 12,988 | 16,235 | 16,235 |
| 93 | Դիմապակի // Переднее стекло | 29,223 | 55,199 | 55,199 |
| 94 | Դիմապակու փոխարինում // Замена переднего стекла | 9,741 | 12,988 | 12,988 |
| 95 | Ղեկային կալունի վերանորոգում // Ремонт рулевой колонки | 29,223 | 61,693 | 58,446 |
| 96 | CO-զոդման աշխատանքներ /գին 1 քառ.սմ-ի համար/ // CO-сварочная работа /цена для 1 кв.см/ | 974 | 974 | 974 |
| 97 | Մեքենաների լվացում // // Автомойка | 3,247 | 5,195 | 5,195 |
| 98 | Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում /գին 1 քառ,դմ / // Полировка и покраска кузова /цена для 1 кв.дм / | 2,273 | 2,273 | 2,273 |
| | **SU -2 ընթացքում օգտագործվող պահեստամասեր, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները // Вспомогательные материалы, масла и запчасти** | | | |
| | **Ղեկավարման, սնման և յուղման համակարգ // Система управления, питания и смазки** | | | |
| 99 | Փական // Клапан | 8,110 | 10,060 | 10,060 |
| 100 | Խցուկ // Сальник | 1,290 | 1,290 | 1,290 |
| 101 | Հակասառիչ հեղուկ 1լ. // Антифриз 1л. | 1,620 | 1,620 | 1,620 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 102 | Յուղ շարժիչի սինթետիկ 5/30 1 լիտր // Масло моторное синтетическое 5/30 1 литр | 4,870 | 4,870 | 4,870 |
| 103 | Յուղի զտիչ // Фильтр масла | 4,870 | 4,870 | 4,870 |
| 104 | Վառոցքի մոմ // Свеча | 4,220 | 5,845 | 5,845 |
| 105 | Շարժիչի ատամնավոր փոկ // Зубчатый ремень двигателя | 35,710 | - | - |
| 106 | Ռադիատոր // Радиатор | 48,700 | 81,170 | 82,140 |
| 107 | Փոխանցման տուփի յուղ SP-IV // Трансмиссионное масло SP-IV | 7,790 | 7,790 | 7,790 |
| 108 | Ավտոմատ տուփի յուղի զտիչ // Масляный фильтр автоматической коробки передач | 7,790 | 12,980 | 12,980 |
| 109 | Օդածախսի տվիչ // Датчик расхода воздуха | 22,729 | 29,223 | 29,223 |
| 110 | Օդորակչի ֆրիոն // Фрион для кондиционера | 9,741 | 9,741 | 9,741 |
| 111 | Օդի զտիչ // Фильтр воздуха | 3,247 | 5,195 | 7,793 |
| | **2. Կախոց // // Подвеска** | - | - | - |
| 112 | Դիմացի հարվածամեղմիչ // Передний амортизатор | 38,964 | 51,952 | 51,952 |
| 113 | Ետևի հարվածամեղմիչ // Задний амортизатор | 29,223 | 42,211 | 42,211 |
| 114 | Խաչուկ // Крестовина | - | 9,741 | 9,741 |
| 115 | Անվակունդ // Ступица | 16,235 | 38,964 | 38,964 |
| 116 | Ներքևի լծակի վռան // Втулка нижней рогатки | 5,195 | 9,741 | 9,741 |
| 117 | Գնդե հոդակապ // Шаровой | 7,790 | 15,580 | 15,580 |
| 118 | Առջևի կայունարար // Передний стабилизатор | 16,230 | 25,970 | 25,970 |
| 119 | Առջևի կայունարարի վռան // // Втулка передний стабилизатора | 3,890 | 7,790 | 7,790 |
| 120 | Վերևի և ներքևի լծակների հանում տեղադրում | 9,740 | 19,480 | 19,480 |
| 121 | Խլացարի խողովակ // Выхлопная труба | 25,970 | 25,970 | 25,970 |
| 122 | Փոխանցման տուփի պատյան // Корпус трансмиссии | 32,470 | 38,960 | 38,960 |
| 123 | Փոխանցման տուփի բարձիկ // Крепление трансмиссии | 29,220 | 29,220 | 29,220 |
| 124 | Փոխանցման տուփի առջևի խցուկ // Передний сальник трансмиссии | 7,793 | 12,988 | 14,287 |
| 125 | Փոխանցման տուփի առանցքակալ // Подшипник коробки передач | 15,586 | 28,574 | 42,211 |
| 126 | Փոխանցման տուփի սկավառակների հավաքածու // Комплект трансмиссионных дисков | 58,446 | 77,928 | 77,928 |
| 127 | Փոխանցման տուփի յուղի մղիչ // Насос трансмиссионного масла | 77,928 | 129,880 | 129,880 |
| 128 | Փոխանցման տուփի յուղ // Масло для коробки передач | 7,793 | 7,793 | 7,793 |
| 129 | Փեխանցման տուփի յուղի զտիչ // Фильтр трансмиссионного масла | 16,235 | 21,106 | 21,106 |
| 130 | Աջ կամ ձախ ձգան // Левая или правая тяга | 4,546 | 6,494 | 6,494 |
| | **3. Ղեկային մեխանիզմ // Рулевой механизм** | - | - | - |
| 131 | Ղեկային կալունի առանցքակալ // Подшипник рулевой колонки | 6,490 | 6,490 | 6,490 |
| 132 | Ղեկային ձող // Рулавой вал | 25,970 | 25,970 | 25,970 |
| 133 | Ղեկային կալունի խաչուկ // Крестовина рулевого вала | 9,740 | 9,740 | 9,740 |
| 134 | Հիդրո ուժեղարար // Гидроусилитель | 16,235 | 16,235 | 16,235 |
| 135 | Հիդրո ուժեղարարի պոմպ // Гидроусилительный насос | 29,220 | 29,220 | 29,220 |
| 136 | Հիդրո ուժեղարարի փոկ // // Ремень гидроусилителя | 9,740 | 9,740 | 9,740 |
| 137 | Ղեկային ձողի ծայրակալ // Наконечник рулевого стержня | 6,490 | 6,490 | 6,490 |
| | **4. Արգելակային համակարգ // Тормозная система** | | | |
| 138 | Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ // Передние тормозные колотки комплект | 14,280 | 18,180 | 18,180 |
| 139 | Առջևի և ետևի սկավառակներ // Передние и задние диски | 38,960 | 58,440 | 58,440 |
| 140 | Արգելակային հեղուկ Dot3 // Тормозная жидкость Дот3 | 2,900 | 2,900 | 2,900 |
| 141 | Հետևի սկավառակային կոճղակների կոմպլեկտ // Задние дисковые колотки комплект | 22,720 | 29,220 | 29,220 |
| | **5. Էլեկտրասարքավորում // Электрооборудование** | | | |
| 142 | Բենդեքս // Бендекс | 20,780 | 20,780 | 20,780 |
| 143 | Գեներատորի փոկ // Ремня генератора | 7,793 | 11,689 | 14,936 |
| 144 | Լամպ // // Ламп | 4,546 | 4,546 | 4,546 |
| 145 | Առջևի լապտեր // Передняя Фара | 32,470 | 32,470 | 32,470 |
| 146 | Հետևի լապտեր // Задняя фара | 19,482 | 19,482 | 19,482 |
| 147 | Կոճ // Катушка индукционная | 37,010 | 37,010 | 37,010 |
| 148 | Գեներատորի առանցքակալ // Подшипник генератора | 19,480 | 19,480 | 19,480 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 149 | Մեկնարկիչ // Стартер | 51,950 | 77,928 | 97,410 |
| 150 | Մեկնարկիչ ռելե // Реле стартера | 16,235 | 16,235 | 16,235 |
| 151 | Մեկնարկիչ ածուխ // Уголь для стартера | 16,235 | 16,235 | 16,235 |
| 152 | Վառոցքի կոճ // Катушка зажигания | 17,530 | 22,720 | 22,720 |
| 153 | Էլեկտրաամբարձիչի շարժիչ // Двигатель элекроподьемник | 38,960 | 103,900 | 103,900 |
| | **Ընդամենը // Итого** | **1,861,030** | **2,940,986** | **2,965,984** |
| | **Ընդանուր // Всего** | **7,768,000.0** | | |

1. Ծառայություն մատուցող կազմակերպությունը պետք է ունենա անհրաժեշտ նյութատեխնիկական բազա և մասնագիտական անձնակազմ

2. Սպասարկման տարածքում ավտոպահեստամասերի պահեստի կամ խանութի առկայություն

3. Ունենա առնվազն հինգ վերամբարձ սարքավորում, նաև համապատասխան հորեր

4. Վերանորոգման համար անհրաժեշտ բոլոր արտադրամասերը գտնվեն նույն հասցեում /ընթացամասի, շարժիչի, էլեկտրականության, ինչպես նաև մեքենայի ախտորոշման և այլ անհրաժեշտ սարքավորումներ և ծառայություններ/

5. Նորոգման ծառայությունները պետք է իրականացվեն կից ներկայացված ցանկին համապատասխան

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

«Հաշվարկային Կենտրոն» ՓԲԸ

ք. Երևան, Աբովյան փող. շ. 27

ՀՎՀՀ 01544167

«Կոնվերս բանկ» ՓԲԸ

Հ/Հ 1930000600150100

Ն.Հարությունյան ____________ Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«ՍԵՐՎԻՍ ՍՏԵՅՇՆ» ՍՊԸ

ք.Երևան, Դավթաշեն 1 թղմ. շենք 3, բն. 9

ՀՎՀՀ 00241595

Էվոկաբանկ ԲԲԸ

Հ/Հ 1660019711410100

Է.Մկրտչյան ____________ Կ.Տ.

*Հավելված N 2*

16.03. 2026 թ. կնքված

**ՀԿ-ԳՀԾՁԲ**-26/03 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026 թ-ին՝ ըստ եռամսյակների | | | | |
| | | | **1-ին եռ.** | **2-րդ եռ.** | **3-րդ եռ.** | **4-րդ եռ.** | **Ընդամենը** |
| 1 | 50111130 | ծառայողական ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ | 100%* | 100%* | 100%* | 100%* | 100%* |

***նույն պայմանագրի վճարման կարգը՝** փաստացի մատուցված ծառայության համար ներկայացված հաշիվ-ապրանքագրի կամ հարկային հաշվի դիմաց 100%

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

«Հաշվարկային Կենտրոն» ՓԲԸ
ք. Երևան, Աբովյան փող. շ. 27
ՀՎՀՀ 01544167
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930000600150100

Ն. Հարությունյան_______________

Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«ՍԵՐՎԻՍ ՍՏԵՅՇՆ» ՍՊԸ
ք.Երևան, Դավթաշեն 1 թղմ. շենք 3, բն. 9
ՀՎՀՀ 00241595
Էվոկաբանկ ԲԲԸ
Հ/Հ 1660019711410100

Է.Մկրտչյան _______________

Կ.Տ